

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

10 սեպտեմբերի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ Ա. Դադայան
2. Ֆարմացիայի ինստիտուտում 01.09.2018թ.-31.08.2019թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների քննարկում և հաստատում:
Զեկուցողներ՝
 - Կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան,
 - Կ.գ.դ., պրոֆեսոր Սուսաննա
3. Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական և մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում: **Զեկուցող՝ Ա. Սադյան**
4. Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմի վերահաստատման հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**
5. Ֆարմացիայի ինստիտուտի ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**
6. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Սադյան**
7. Ընթացիկ հարցեր:
 - Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Նաիրա Շաբոյանի ատեստավորման հարցը (Ղեկավար՝ դ.գ.դ. Նաիրա Զիչոյան):

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2019-2020 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով ներկայացրեց ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2019-2020 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, որ գիտական խորհրդի անդամները նախապես ծանոթացել են աշխատանքային պլանի նախագծին՝ դիտողություններ և առաջարկություններ անելու համար: Ա. Դադայանը հավելեց, որ գիտխորհրդի աշխատանքային պլանի նախագիծը կազմելիս հաշվի են առնվել տարվա ընթացքում ներկայացված առաջարկներն ու դիտողությունները: Ելույթ ունեցավ գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, ով նշեց, որ եթե այլ դիտողություններ և առաջարկություններ չկան, ապա պետք է հաստատել գիտական խորհրդի 2019-2020 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական խորհրդի 2019-2020 ուս. տարվա աշխատանքային պլանը:

2. Ֆարմացիայի ինստիտուտում 01.09.2018թ.-31.08.2019թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների քննարկում և հաստատում:

Լսեցին՝

- 2.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանին, ով համառոտ ներկայացրեց «Հակաբիոտիկների նկատմամբ կայուն *Pseudomonas* ցեղին պատկանող շտամերի պլազմիդների գենետիկական հետազոտությունը» վերնագրով թեմայի 01.09.2018թ. - 31.08.2019թ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները:

Ա. Հովհաննիսյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերին պատկանող շտամներ: Պարզվել է, որ դրանք կրում են պլազմիդներ, որոնք ապահովում են հակաբիոտիկների նկատմամբ կայունություն: Այդ կայունությունը կարող է փոխանցվել ինչպես տեսակների ներսում, այնպես էլ՝ մեկ ցեղի ներկայացուցչից մեկ այլ տեսակի ներկայացուցչի: Ստացված տվյալների հիման վրա հրատարակվել են 1 գիտական հոդված և 4 թեզիս:

2.2 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադալյանի ղեկավարած «Հայաստանի ագարիկոմիցետային դեղասնկերի միկոբիոտայի կարգաբանական և էկոլոգիական վերլուծությունը՝ դրանց կենսատեխնոլոգիական ներուժի գնահատման և գենետիկական ռեսուրսների պահպանման նպատակով» վերնագրով թեմայի 01.09.2018թ. - 31.08.2019թ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը:

Ս. Բադալյանի բացակայության պատճառով հաշվետվությունը ներկայացրեց թեմայի կատարող կ.գ.թ., ավագ գիտաշխատող Նարինե Ղարիբյանը, ով նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Հայաստանում տարածված դեղասնկերի պտղամարմինների հավաք, տեսակորոշում և մաքուր կուլտուրաների անջատում: Ամփոփվել է ագարիկոմիցետային դեղասնկերին պատկանող առանձին խմբերի՝ կոպրինային, պոլիպորային և հիմենոխետային կարգաբանական և էկոլոգիական վերլուծությունը, տեսակների ցուցակագրումը: Ուսումնասիրվել է մոտ 20 տեսակների հակաբակտերիալ, հակասնկային, թրոմբոլիտիկ ակտիվությունը, գնահատվել է դրանց կենսատեխնոլոգիական ներուժը դեղաբանության, սննդի և կոսմետիկ միջոցների արտադրության մեջ կիրառման նպատակով:

Ստացված տվյալների հիման վրա հրատարակվել են 5 գիտական հոդվածներ (ևս 3 հոդված գտնվում են տպագրման փուլում) և 6 թեզիս:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, անդամներ՝ Ա. Մկրտչյանը, Ռ. Հովհաննեսյանը, Է. Սեկոյանը: Գիտխորհրդի անդամ Է. Սեկոյանը հարցրեց, թե հատկապես Հայաստանի ո՞ր շրջանների սնկերն են ուսումնասիրվել և ինչպիսին է դրանց կենսատեխնոլոգիական ներուժը:

Ն. Ղարիբյանը պատասխանեց, որ նշված ժամանակահատվածում ուսումնասիրել են Կոտայքի, Տավուշի մարզերից բերված դեղասնկերը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները:

3. **Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական և մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում:**

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մինչ օրս Ֆարմացիայի ինստիտուտում գործում էին ավարտական և մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողովներ, որոնք 3 տարի շարունակ իրականացրել են այդ աշխատանքների նախնական փորձաքննությունները: Նա նշեց, որ անհրաժեշտ է վերանայել այդ հանձնաժողովների կազմերը և հորդորեց գիտխորհրդի անդամներին ներկայացնել առաջարկություններ:

Ելույթ ունեցան՝ Գիտխորհրդի անդամներ Ռ. Հովհաննեսյանը, Մ. Շեյրանյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը և գիտքարտուղար Ա. Դադայանը, ովքեր

առաջարկեցին ավարտական և մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողովների հետևյալ կազմերը.

Ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողով.

Նախագահ՝ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյան
Անդամներ՝ Մերի Հայրապետյան
Անի Չախոյան

Մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողով.

Նախագահ՝ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան
Անդամներ՝ Գոհար Մկրտչյան
Մելանյա Ղազարյան

4. Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմի վերահաստատման հարցը:

Լսեցին՝ գիտքարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի կազմում կատարել փոփոխություն, քանի որ մեթոդական խորհրդի նախագահ ք.գ.թ. Ս. Պետրոսյանը այժմ գտնվում է ֆիզիոլոգիական արձակուրդում:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ս. Վարդապետյանը, ովքեր առաջարկեցին Հայարթի Սիմոնյանի թեկնածությունը՝ ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահի համար: Գիտխորհրդի մյուս անդամները ևս հավանություն տվեցին առաջարկին:

Որոշեցին՝ Սաթենիկ Պետրոսյանի փոխարեն Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահ նշանակել Ֆարմքիմիայի և Ֆարմակագնոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարթի Սիմոնյանին:

5. Ֆարմացիայի ինստիտուտի ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու հարցը:

Լսեցին՝ գիտքարտուղար Ա. Դադայանին, ով տեղեկացրեց, որ գիտխորհրդին է դիմել Ֆարմացիայի ինստիտուտի ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի նախագահ Ի. Սեկոյանը, ով իր դիմումի համաձայն, խնդրում է ազատել իրեն հանձնաժողովի նախագահի և անդամի պաշտոնից: Գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, անդամներ՝ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջարկեցին Բ.գ.դ. Ռուբեն Հովհաննիսյանի թեկնածությունը: Գիտխորհրդի մյուս անդամները ևս հավանություն տվեցին առաջարկին:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ատենախոսական աշխատանքների առաջնային նյութի ստուգման հանձնաժողովի նախագահ նշանակել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանին:

6. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ ինչպես յուրաքանչյուր տարի, այս ուսումնական տարում ևս անհրաժեշտ է ներկայացնել երկու ուսանողի թեկնածություն Լևոն Ռոտինյանի և Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար: Նա նշեց, որ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը երկու տարի է տրամադրվում է մագիստրատուրայի ուսանողուհի Մարգարիտա Բադդասարյանին, իսկ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը մեկ տարի է տրամադրվում է Հասմիկ Արամայիսի Մարգսյանին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ժ. Սարգսյանը, Կ. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին կատարել ռոտացիա և ներկայացնել մեկ այլ զերազանց առաջադիմությամբ ուսանողի թեկնածություն՝ Լևոն Ռոտինյանի կրթաթոշակի համար: Նրանք առաջարկեցին Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Սպարտակ Աշոտի Սադյանի թեկնածությունը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր ևս կողմ արտահայտվեցին Սպարտակ Սադյանի թեկնածությանը՝ նշելով վերջինիս քարձր առաջադիմությունը և ակտիվությունը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Հասմիկ Արամայիսի Մարգսյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Սպարտակ Աշոտի Սադյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

6. Ընթացիկ հարցեր:

6.1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմֆիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Նաիրա Շաբոյանի ատեստավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմֆիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Նաիրա Շաբոյանին, ով ներկայացրեց հայցորդության մեկ տարում Դրախտածառը (*Cotinus coggygria Scop.*) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» թեմայի շրջանակներում կատարված գիտահետազոտական աշխատանքները և պատասխանեց ներկաների հարցերին:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սադյանը, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմֆիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում, և հաշվի առնելով հայցորդի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Ա. Սադյանը նշեց, որ ուսուցման առաջին տարում հայցորդ Ն. Շաբոյանը հանձնել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» բաժնից ստուգարք՝ մասնագիտական օտար լեզու առարկայից; Նա մասնակցել է 2019թ.-ին կայացած 5-րդ համահայկական բժշկական կոնգրեսին, որտեղ հանդես է եկել բանավոր զեկույցով, տպագրել է միջազգային գիտաժողովի 1 թեզիս:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան